



ՄՈԼՈՐԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՄՈԼՈՐԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ


ՀԵՔԻԱԹ
ԿԱԶՄԵՑ ԵՎ ՁԵՎԱՎՈՐԵՑ ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ
ՀԵՔԻԱԹԻ ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար


Աշխատանքը կատարվել է ՀՀ ՆԳՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության
Բնակչության հետ տարվող աշխատանքների վարչությունում և տպագրության է երաշխավորվել ՀՀ
ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության գիտատեխնիկական խորհրդի կողմից:
Նպատակն է՝ բարձրացնել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների՝
երկրաշարժին դիմակայելու գիտելիքների մակարդակը:

ԵՐԵՎԱՆ 2024


ՏՐՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ



Վաղու՛ց, շա՛տ վաղուց մարդիկ ապրում էին խաղաղ:



Գյուղացին հող էր մշակում,




հովիվն անասուններն էր արոտ տանում,




իսկ կանայք հոգում էին տան հոգսերը




և երեխաներին դաստիարակում:




Ժամանակները փոխվեցին. մարդիկ զարգացան, սկսեցին ավաններ և քաղաքներ կառուցել: Նրանք իրենց հոգսերը թեթևացնելու համար նորանոր մեքենաներ ստեղծեցին:





Եվ, չգիտես թե ինչու, իրենց ստեղծածը վայելելու փոխարեն սկսեցին հարաբերություններ պարզել. և արդյունքում եղան պատերազմներ, որոնց հաջորդեցին սովը, հիվանդություններն ու այլ բազում աղետներ:









Մոլորակը հոգնել էր այդ ամենից. չէ՛ որ ամեն ինչ արվել էր մարդկանց հանգիստ և երջանիկ կյանքի համար, սակայն նրանք չգնահատեցին այդ և իրենց իսկ գործողություններով բազմաթիվ աղետների պատճառ դարձան:



Աղետներից հոգնած՝ տարբեր երկրներից ներկայացուցիչներ հավաքվեցին
և չգիտակցելով իրենց արածը՝ սկսեցին մեղադրել նրան:

- Մոլորակը մեզ չի սիրում:
- Նա մեր հանդեպ այնքան էլ բարյացակամ չէ:
- Այսքան աղետներ, և ամենից շատ տուժում ենք մենք:
- Մինչև ե՛րբ է այդպես լինելու, և մենք կարո՞ղ ենք այդքան դիմանալ:


Այս ամենը լսեց ծերուկ մոլորակը, շատ վիրավորվեց, հուզվեց և որոշեց
խոսել:



Հողը ցնցվեց, ծովերը փոթորկվեցին, ամպերը գոռացին: Շրջակայքում ամեն ինչ խառնվեց: Հավաքվածները վախից քարացել էին, երբ լսվեց նրա ահարկու ձայնը:


-Հավանաբար, ես երկար եմ լռել և տարել ձեր բոլոր չարագործությունները: Ամեն անգամ փորձել եմ ներել, սակայն դուք ինչպես ցանկացել, այնպես էլ վարվել եք ինձ հետ:

Ոչնչացրել եք կանաչ անտառների հազարավոր հեկտարներ, ձեր հաճույքի համար սպանել եք անթիվ մեծ ու փոքր գազաններ, թունավորել եք ծովերն ու օվկիանոսները, կատարել եք ստորգետնյա ատոմային և ջրածնային զենքի փորձարկումներ: Չէ՞ որ այդ ամենը կարող է հանգեցնել բազմաթիվ աղետների՝ հրդեհների, երաշտի, սովի, փոթորիկների, ջրհեղեղների և երկրաշարժերի:



Մի պահ կա՛նգ առեք և ետ նայեք: Մի՞թե մթագնել է ձեր ուղեղը: Մեղադրում եք ինձ, որ ձեզ չեմ սիրում, չարական եմ, սակայն դա այդպես չէ: Ես խարդավանքով չեմ լցված ձեր հանդեպ:

Դուք բոլորդ էլ իմ զավակներն եք, և ես բոլորիդ էլ հավասարաչափ եմ սիրում: Աստված ստեղծեց ինձ, իսկ հետո՝ ձեզ: Այն ամենը, ինչ ստեղծվել էր մինչ ձեզ և ձեզնից հետո, պետք է ծառայի ձեր իսկ բարօրությանը:






Եղե՛ք շրջահայաց, նայե՛ք կենդանիներին. եթե մի պահ վարանեք՝
հետևեք նրանց. նրանք իրենց վարքով կհուշեն ձեզ գալիք երկրաշարժի
մասին:

Բարև՝ բոլորին:

Ես շրջապատում եմ քեզ, մա՛րդ, ամենուրեք՝ թե՛ տանը, թե՛ դրսում:
Ես դեռ ի սկզբանե երդվեցի հավատարիմ լինել քեզ, մա՛րդ, և մնացի
երդմանս հավատարիմ: Ես զգում եմ գալիք երկրաշարժը: Այդ գործում
ինձ շատ են օգնում թաթերիս մեջ գտնվող բարձիկները: Նրանց
օգնությամբ ես զգում եմ ընդերքի ցնցումները, իսկ հոտառությունս
թույլ է տալիս զգալու ընդերքից դուրս եկող գազերի անսովոր հոտերը:
Այդ ժամանակ հրաժարվում եմ կերից, սկսում եմ ոռնալ, փորձում եմ
հասկացնել մարդկանց դուրս գալ տնից, գոնե մի որոշ ժամանակով,
իսկ եթե չեն հասկանում, կտրում եմ կապերս ու փախչում:












Ի տարբերություն շան՝ ես շատ քմահաճ եմ, սակայն իմ վարքով ես էլ եմ հուշում քեզ, մա՛րդ, գալիք երկրաշարժի մասին: Կերպարանափոխվում եմ, տեղս չեմ գտնում, անընդհատ մլավում, թաքնվում քեզնից, դուրս եմ ուզում փախչել և ավելի ապահով տեղ գտնելով՝ տեղափոխում եմ նաև ձագերիս: Տուն եմ վերադառնում միայն երկրաշարժից հետո:




Իմ բնույթով ես ևս հավատարիմ եմ քեզ, մա՛րդ: Նախօրեին՝
երկրաշարժից առաջ, սկսում եմ բարձր խրխնջալ, դոփել
տեղում, փորձում եմ արձակել կապերս, իսկ եթե դա ինձ
հաջողվում է, կոտրելով ախոռի դռները՝ դուրս եմ փախչում.
այսօրինակ իմ վարքով քեզ էլ եմ դուրս հրավիրում տնից.
հետևի՛ր ինձ և ո՛ղջ կմնաս:







Իմ էությունը ես բավականին հանգիստ կենդանի եմ, և շատ քիչ բաներ կարող են ինձ անհանգստացնել, օրինակ՝ երկրաշարժը: Այդ ժամանակ ես հրաժարվում եմ կերից, կաթնատվությունս քչանում է, սկսում եմ բարձրաձայն բառաչել, եթե գոմում եմ, փորձում եմ կտրել կապերս և դուրս փախչել: Մա՛րդ, չփորձես ինձ հիվանդի տեղ դնել, ավելի ճիշտ կլինի դու էլ այդ ժամանակ դրսում լինես:




Զգալով գալիք աղետը և մեր կյանքին սպառնացող վտանգը՝ ես առավել նյարդային եմ դառնում, չեմ լսում տերերիս, հավաբուն չեմ մտնում, չեմ թողնում և ընկերուհիներիս: Սկսում եմ կանչել անկախ օրվա ժամից և դրանով իսկ քեզ տնից դուրս հրավիրում:



Ի տարբերություն մյուս կենդանիների՝ ես չեմ կարող գոռալ ու գոչել:
Իմ նվիրվածությունը քեզ, մա՛րդ, ես իմ կյանքի գնով եմ արտահայտում:
Երկրաշարժի նախօրեին ես դուրս եմ լողում ծովի խորքից, մոտենում
ափին, եթե դրանով էլ ուշադրությանդ չեմ արժանանում, դուրս եմ
ցատկում ջրից և զարնվելով ափերին՝ սատկում:









Դու երբեք ինձ չես սիրել, մա՛րդ, և ամեն կերպ պայքարել ես իմ դեմ, սակայն այդ ժամանակ լքելով իմ բունը՝ հայտնվում եմ քո աչքի առաջ, կարծես օգնություն եմ հայցում քեզնից...




Սակայն զգալով, որ քո տունն էլ ամուր չէ՝ լքում
են այն և հեռանում առավել ապահով վայր:




Իմ իմաստությունը գնահատվել է դեռ վաղուց, այսօր էլ դուք
որպես իմաստության նշան կարող եք տեսնել գավազանը
եկեղեցու առաջնորդի ձեռքին: Զգալով երկրաշարժը՝
մասսայաբար լքում ենք մեր բները:





Իմ աշխատասիրությունը ձեզ բոլորիդ քաջ հայտնի է: Թե ինչպես եմ պաշտպանում իմ բունը թշնամուց որպես քաջ զինվոր, դա էլ դուք լավ գիտեք: Ինչը կարող է մեզ ստիպել լքել մեր բունը, եթե ոչ գալիք երկրաշարժը: Այդ օրերին մենք մասսայաբար լքում ենք տեղանքը, ոլորված պարանի տեսքով շարժվում մի ուղղությամբ, որքան կարելի է էպիկենտրոնից հեռու:







Մեր ժրաջան աշխատանքով շատերին ենք զարմացնում, սակայն այդ օրերին կարծես հիվանդ լինենք: Մեր երգը վերածվում է լացի, աշխատել չենք կարողանում, հավաքվում և կախվում ենք փեթակից: Մեզնից թույլերը սատկում են:

Մեր այդ վիճակը հնարավոր երկրաշարժի նախանշան է:






Տարվա բոլոր եղանակներին ես միշտ քո աչքի առաջ եմ: Շատ թռչունների նման ձմռանը չեմ չվում տաք երկրներ և միայն քո բարության շնորհիվ եմ ձմռանը պահպանում գոյությունս: Մա՛րդ, այդ օրերին ես էլ եմ զգում սպառնացող երկրաշարժը և հենց այնպես չեմ կարող թողնել քեզ ու հեռանալ: Մենք շատ անհանգիստ ենք, ծլվլում ենք, մոտենում պատուհաններին, կտուցով ծեծում ապակիները, երբեմն էլ բաց պատուհաններից ներս մտնում և մեր անհանգիստ վարքով փորձում ենք ձեզ դուրս հրավիրել տնից: Եվ միայն հետո երամներով լքում ենք տեղանքը. դա ձեր աչքին պետք է անսովոր թվա:



Եթե նրանց մոտ զարգացել են զգայարանները, ապա դու ունես մտածելու ունակություն և բանականություն: Ուստի ժամանակն է, որ երկրաշարժի դեպքում ինքդ կարողանաս ճիշտ կողմնորոշվել և գործել:







-  Սիրելի՛ մեծեր, տունը պետք է կառուցել ամուր, հաստատուն հողի վրա:
-  Կառուցված տներում ոչ մի դեպքում մի կատարեք շենքի ամրությունը թուլացնող ձևափոխություններ:







 Մեզ ցույց տվեք մեր տան ամենաանվտանգ տեղերը՝ բնակարանի ներքին կրող պատերը, դրանցում դռան բացվածքները և հենասյուները:



Բնակարանում ամրացրե՛ք կահույքը. չէ՛ որ նույնիսկ թույլ ցնցումների ժամանակ նրանք կարող են շրջվել և մեզ վնասել:




Մահճակալները տեղադրե՛ք պատուհաններից հեռու՝ ներքին կրող պատերի մոտ: Մահճակալի գլխավերևում ծանր դարակներ և իրեր չամրացնե՛ք:



 Օգնե՛ք մեզ նախապատրաստել առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ, որտեղ պետք է տեղադրված լինեն ջրով լի տարա, դեղորայքով դեղարկղիկ, տաք հագուստ, մարտկոցով ռադիոընդունիչ և գրպանի լապտեր:

Այդ ամենը մեզ շատ անհրաժեշտ կլինի, երբ մենք, տուն ու տեղից կտրված, կհայտնվենք փողոցում:




ՀԻՇԵ՛Ք

9 1 1

հեռախոսահամարը


**Մենք գիտենք նաև
ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ**




Շենքի առաջին, երկրորդ և երրորդ հարկերում գտնվելիս պետք է դուրս գաք տնից և վազեք դեպի բաց տարածություն:



Բնակարանի վերին հարկերում գտնվելիս պետք է կանգնեք բնակարանի ամենաանվտանգ տեղերում...



Մտե՛ք կամ սեղանի, կամ մահճակալի տակ:







Պետք է հեռու մնաք շենքի արտաքին պատերից և պատուհաններից:



Ոչ մի դեպքում չվազե՛ք դեպի աստիճանները. դրանք առաջինն են փլուզվում:



Եթե բալում եք, շենք չմտնեք: Հեռացե՛ք բարձր շենքերից, սյուներից, բարձր ծառերից և ճոճանակներից դեպի բաց տարածություն և սպասեք ցնցումների ավարտին:



Եթե գտնվում եք տրանսպորտում, խնդրեք վարորդին կանգնեցնել մեքենան կամուրջներից հեռու՝ բաց տարածությունում: Մեքենայից դուրս մի՛ եկեք:

Ուժեղ երկրաշարժի ժամանակ շենքերը փլուզվում են, և մեզնից յուրաքանչյուրը կարող է հայտնվել այնտեղ: Պետք չէ վախենալ, լաց լինել կամ քաշքշել կողքի քարակույտերը:





Անհրաժեշտ է զրնգուն իրերով իրար խփել կամ գոռալ, որպեսզի փրկարարները մեզ լսեն և փրկեն:



Մենք գիտենք, որ փլատակում գտնվող մարդիկ առանց սննդի կարող են ապրել 14 օր, իսկ առանց ջրի՝ 7 օր:



 Սիրելի՛ մեծեր, այս վարքականոնների իմացությունը և ժամանակին կիրառումը կօգնեն մեզ խուսափելու երկրաշարժի հետևանքներից:



Մարդի՛կ, սիրե՛ք Երկիր մոլորակը, ապրե՛ք այնտեղ՝ զգալով բնության շունչը:
Մեր մոլորակը մեր տունն է:

Եկեք միասին սրբությամբ պահպանենք այն:

Օգտագործված գրականություն

1. <http://ngdir.ir/>
2. <http://californiawatch.org/k-12/coloring-book-helps-kids-prepare-earthquake-9660>
3. <http://kyem.ky.gov/programs/Pages/Calendar.aspx>
4. <http://www.tvoyrebenok.ru/raskraska-dom-2.shtml>

և այլ կայքերից

ՄՈԼՈՐԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ

